



16 (171). ԽԱՔԼԱՆ ԱՂՎԵՍ

Ժամանակով, ձմեռ մե, մեկ դեղեն ուրիշ մե նորհարս կյ  
տանեն: Հարսնածնէր շրինդ կը խաղեն, ուրախութեն կէնեն, նոր-  
հարս վրը ձիուն մինակ առաջ կէրթեր, ո՛րտեղից աղվես մե սատա-  
նի ոյէս կը թռնա վըր ձիուն, կանի հարսի յառեջ, կըսե.

— Հա՛րս, ինչ կիտաս ընծի, օր չը բոռամ ըսիմ.

Հարս տտոեց.

Ձին խոտավ.

Լոխտեն կտրավ:

— Յամա՛ն, աղվես ախպեր,— կըսե հարս,— քու բախտն իմ  
չընկի, շէղնի-չէղնի հմալ բան հանիս քու բերնեն, կէղնիմ խայտա-  
ռակ մըջ ախշըրքին:

— Ձէ օր չէ,— կըսե աղվես,— օր քու զուգս ու զարդարանք  
չըմեն շիտաս ընծի, կըսիմ. աշկե, հա՛, վըր լեզվիս է, ըսի՛մ, հանդե  
ըսեցի, հա՛, տե՛ս, պտի բոռամ ըսիմ.

Հարս տտոեց,

Ձին խոտավ,

Լոխտեն կտրավ:

Նորհարսն ամոթու կը հանե զուր զուգս ու զարդարանք չըմեն  
կիտա աղվըսուն: Աղվես կառնե կէրթա: Կէրթա հեռուն, հարսի  
զուգս ու զարդարանք կը կապե վրեն ու մեշելով կէրթա ու դիկա:  
Մեկ էլ կը տեսնա գելն էն դին գիկա, կը տեսնա ղաղվես զուգված  
զարդարված՝ կ'աչքնա:

— Աղվես ախպեր, էդ յուստենի՞ս ճարի իդա խըղար օսկի,  
զուգս ու զարդարանք:

— Չըս գինա՛:

— Չէ՛, ի՞նչ գինամ:

— Ձմեռ է, չէ՞. կէրթաս Մուրադ գետի ափ, զպոչդի կը դնիս մըջ ջրին, չիրկըվորե շուր մի լուս կը բաքլիս, աղոթրան օր առավ բացվել՝ ուժով զպոչդի կը քաշիս, տես, թե ի՞նչ օսկի, ի՞նչ արծաթ, ի՞նչ զուգս ու զարդարանք պոչիդ հետ դուս դիկան:

— Հա՛ա՛:

— Հա՛, ախպեր: Կը խարի՞մ գըրդի, հարի չըսօր գվո՞ն խարի, օր դըրգի խարիմ, ի՞նչ վատութեն իս էրի ընձի:

Գեւ կէրթա Մուրադ գետ, չիրկըվորե զպոչ կը կոխե մըջ ջրին: Ձմռան չերկեն գիշեր ու ձկձկան պարզկա, կը բաքլե հարի լուսուդեմ: Յառջի ազոթըրնին զպոչ կը քաշե, պոչ չիգա, մեկ լե կը քաշե, պոչ չիգա, կը գորե, կը գորե, մեկ լե կը տեսնա՝ խը՛ոսլ, պոչ կը կտրի մնա մըջ ջրին, վըր քյալին գիկա, քիթ ու մուռ կը ջնջիսվի:

Օլոր օր աղվես կէրթա, օր տեսնա գել ախպերն ինչ հալն է:

— Բարի լուս, գել ախպեր, ի՞նչ հալն իս, ըսկի բան լընկա՛վ ձեռքդի:

— Չէ՛, աղվես ախպեր, բան չընկնելուց մադա՛ զպոչ լե տլի դուս, քիթ ու մուռ լե ջարգվավ:

— Է՛, ախմախ հարիֆ, դխայդեն չըս գի՛ցերի, շո՛ւտ իս յուդի զպոչդի քաշիս հանիս ջրեն: Ո՞ն գինա մկա պոչդ ու գուգս ու զարդարանքներ չո՛ւր գացին չելան դուս...

